Մամլո հաղորդագրություն

Gebrüder Weiss ընկերությունն աճ է գրանցում իր գործունեության բոլոր ոլորտներում

Լոգիստիկ ծառայությունների մատակարարն ընդլայնում է իր ցանցը դեպի Եվրոպա և այլ մայրցամաքներ ,մեծացնում զուտ շրջանառությունը՝ հասցնելով այն 2,5 միլիարդ եվրոյի / Մեծ պահանջարկ առցանց առևտրի նկատմամբ / 112 միլիոն եվրոյի ներդրում ներկայացուցչական ցանցի ընդլայնման համար / Մշտական ուշադրություն թվային ծառայություններին և «կանաչ» լոգիստիկային

ք. Լաուտերախ, 16-ը մարտի, 2022թ. Միջազգային բեռնափոխադրումներ և լոգիստիկ ծառայություններ իրականացնող Gebrüder Weiss ընկերությունը նախորդ ֆինանսական տարում նախնական տվյալներով արձանագրել է 2,54 միլիարդ եվրոյի զուտ շրջանառություն: Ինչը նշանակում է 43 տոկոս աճ ՝նախորդ տարվա համեմատ (2020թ. շրջանառությունը կազմել է 1,77 միլիարդ եվրո): Շրջանառության աճի 70 տոկոսից ավելին բաժին է ընկնում օդային և ծովային բեռնափոխադրումներին : Բեռների ծավալի համաշխարհային դեֆեցիտը հանգեցրեց ծովային և օդային ընկերությունների սակագների շարունակական աճին: Այս ծախսերի վերահաշվարկը դարձավ ընկերության շրջանառության աճի հիմնական գործոնը, բայց և հանգեցրեց արտասովոր մարտահրավերների:

«2021 թվականը ևս մեկ բացառիկ տարի էր և առանձնանում էր խիստ անկայունությամբ: Բեռնափոխադրման ծառայությունների շատ փոքր առաջարկի և մեծ պահանջարկի անհավասարակշռությունը լուրջ ազդեցություններ ունեցավ: Միայն քրտնաջան աշխատանքի ու մեծ ջանքերի շնորհիվ մեզ հաջողվեց մեր հաճախորդներին տրամադրել բեռնափոխադրման համապատասխան լուծումներ, թեև հնարավորությունները սահմանափակ էին: Ես հպարտությամբ եմ նշում, թե ինչ արեցին մեր աշխատակիցներն այդ դժվարին պայմաններում», ասում է Gebrüder Weiss ընկերության գործադիր խորհրդի նախագահ Վոլֆրամ Զենգեր-Վայսը:

2021 թվականին իր հաճախորդների կարիքները հոգալու համար ընկերությունը կազմակերպել է լրացուցիչ օդային չարտեր բեռնափոխադրումներ՝ իրականացնելով «պրայթերներ». մարդատար ինքնաթիռները վերափոխելով բեռնատարի: Համաշխարհային ցանցի զարգացման համար կարևոր քայլ եղավ Ipsen Logistics ընկերության Գերմանիայի, Լեհաստանի և Մալայզիայի մասնաճյուղերի ձեռքբերումը 2020 թվականի վերջին: Ընդհանուր առմամբ օդային,ծովային և լոգիստիկ ծառայությունների բնագավառում

ընկերությունը արձանագրել է 1,030 միլիոն եվրոյի շրջանառություն (2020 թվականին այն կազմել է 470 միլիոն եվրո):

Ցամաքային տրանսպորտի և լոգիստիկայի բաժանը տարին փակել է 16 տոկոսով աճով՝ մինչև 1,277 միլիոն եվրո շրջանառությամբ (2020 թ.՝ 1,104 միլիոն եվրո): Արդյունավետությունը խթանելու նպատակով Gebrüder Weiss-ը կիրառել է նորարարական տեխնոլոգիաներ՝ տրանսպորտի պլանավորման, առաքման և բեռների չափման համար. ստեղծվել է նոր համախմբված փոխադրամիջոցների կապ Վիեննայից դեպի Գերմանիայի Ռուր շրջան: Ցամաքային բեռնափոխադրումների բոլոր ոլորտներում գրանցվել են նոր ցուցանիշներ:

«Առաքում տուն» ծառայության միջոցով Gebrüder Weiss ընկերությունը Ավստրիայում, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում կատարել է շուրջ 1,74 միլիոն առաքում վերջնական սպառողներին ՝ շարունակելով ամրապնդել շուկայի առաջատար դիրքն այդ երկրներում (2020 թվականին իրականացվել է 1,37 միլիոն առաքում): DPD Austria ընկերությունը, որի բաժնետեր է հանդիսանում Gebrüder Weiss - ը, 2021 թվականին առաքել է ավելի քան 66,5 միլիոն ծանրոց: Վերջինս համապատասխանում է 16 տոկոս աճին անցած տարվա համեմատ, ինչը հիմնականում պայմանավորված է ուժեղ մասնավոր սպառողի գործունեությամբ :

Շուկայի առաջատար Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում

Ձեռք բերելով մի քանի այլ ընկերություններ՝ Gebrüder Weiss-ը Բավարիայում մեծացրել է իր ցամաքային բեռնափոխադրումների հարավգերմանական ցանցը : Ընկերությունը ևս մի քանի այլ կազմակերպություն է ձեռք բերել Բուլղարիայում և Թուրքիայում, նոր մասնաճյուղեր է բացել Հունգարիայում, Չեխիայում և Հարավային Կորեայում: Մասնաճյուղերի ցանցի ընդլայնման և նոր կառուցապատումների մեջ ընկերությունն ընդհանուր առմամբ ներդրել է 112 միլիոն եվրո (2020 թվականին ներդրվել է 75,6 միլիոն եվրո). ընկերության պատմության մեջ սա մինչ օրս կատարված ամենամեծ ծավալով ներդրումն է: Մասնաճյուղերի ցանցի ընդլայնման հետ մեկտեղ 8 տոկոսով աճել է նաև աշխատողների թվաքանակը. ընկերությունն այժմ ունի շուրջ 8 000 աշխատակից:

14 500 օգտատեր այժմ օգտվում է հաճախորդների myGW նոր հարթակից

Լոգիստիկ գործընթացներն օպտիմալացնելու համար Gebrüder Weiss ընկերությունը հանուն իր հաճախորդների լայնորեն կիրառում է թվային գործիքներ. «Մատակարարման ողջ շղթայում զգալիորեն մեծացել են արագության, արդյունավետության և թափանցիկության ապահովման պահանջները: Մեր myGW հարթակի միջազգային տարածումը և հետագա զարգացումը կարևոր ձեռքբերում է մեզ համար», ասում է Վոլֆրամ Ձենգեր-Վայսը: Թվային

հարթակը, որից արդեն օգտվում է ավելի քան 14 500 օգտատեր 19 երկրում, հաճախորդներին տրամադրում է բեռների հոսքերի վերաբերյալ տեղեկություններ իրական ժամանակում: Բացի այդ, բազմաթիվ հեղինակավոր պատվիրատուների համար իրականացվել են ծրագրեր մատակարարման շղթայի կառավարման բնագավառում: Լոգիստիկ կազմակերպությունը նպատակ ունի այս ոլորտում աճելու և ընդլայնելու իր կողմից առաջարկվող թվային ծառայությունները: «Կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված ճգնաժամը ցույց տվեց նաև, թե որքան կարևոր է ֆիզիկական ենթակառուցվածքի հսկողությունը: Եվս մեկ անգամ համոզվեցինք, որ մեր «Լավագույնը երկու աշխարհներից» ռազմավարությունը, որը մի կողմից ենթադրում է ժամանակակից թվային գործիքների կիրառում և մյուս կողմից՝ լոգիստիկ համակարգերի, բեռնափոխադրման կարողության և լավ վերապատրաստված աշխատակիցների առկայություն, արդարացրեց իրեն», նշում է Զենգեր-Վայսը:

Կլիմայական չեզոքություն մինչև 2030 թվականը

Մինչև 2030 թվականը ընկերության մասնաճյուղերն աշխատելու են կլիմայական չեզոքություն ապահովելու ուղղությամբ: Միայն անցյալ տարի Ավստրիայի և Գերմանիայի բեռնային համալիրներում այդ նպատակով տեղադրվել է ութ արևային ֆոտովոլտային կայան: Մյուս մասնաճյուղերում կայանները տեղադրվելու են այս տարի: Դրանից բացի ընկերությունը ներդնում է նոր տեխնոլոգիաներ. լոգիստիկայի ոլորտում արդեն օգտագործվում է աշխարհում առաջին ջրածնային բեռնատարը, մինչդեռ բեռնափոխադրումների և «Առաքում տուն» ծառայության համար օգտագործվում են հեղուկ գազով և հոսանքով աշխատող այլընտրանքային շարժիչներով մեքենաներ: Իր հաճախորդների համար Gebrüder Weiss ընկերությունը ներդրել է «զրոյական արտանետումներ» ծառայությունը, որի շրջանակում լրացուցիչ վճարվող գումարով հնարավոր է փոխհատուցել յուրաքանչյուր լոգիստիկ պատվերից գոյացող CO_2 արտանետումները: Այս միջոցները ֆինանսավորում են կլիմայի պաշտպանության հավաստագրված ծրագրեր:

Նկարագիր՝նախորդ ֆինանսական տարում լոգիստիկ ընկերության զուտ շրջանառությունը նախնական տվյալներով կազմել է 2,5 միլիարդ եվրո (աղբյուր՝ Gebrüder Weiss):

Նկարագիր `Վոլֆրամ Զենգեր-Վայս, Gebrüder Weiss ընկերության գործադիր խորհրդի նախագահ: (աղբյուր՝ Gebrüder Weiss / Gnaudschun):

Նկարագիր `Gebrüder Weiss ընկերության տնօրինության կազմ (ձախից). Լոթար Թոմա, Փեթեր Քլոյբեր, Վոլֆրամ Զենգեր-Վայս (նախագահ) և Յուրգեն Բաուեր (աղբյուր՝ Gebrüder Weiss / Գնաուդշուն):

Նկարագիր Gebrüder Weiss ընկերությունը խթանում է այլընտրանքային շարժիչներով մեքենաների օգտագործումը: Նկարում պատկերված է ջրածնային բեռնատարը, որը մեկ տարի է, ինչ շահագործվում է Շվեյցարիայում: (աղբյուր՝ Gebrüder Weiss / Սամս):

Նկարագիր Gebrüder Weiss ընկերությունն ընդհանուր տասներկու մասնաճյուղում շահագործում է արևային ֆոտովոլտային կայաններ, որոնք արտադրում են շուրջ 7,3 գիգավատտ հոսանք, իսկ CO_2 արտանետումները տարեկան կրճատում են շուրջ 480 տոննայով. Նկարում պատկերված է Ավստրիայի Գրաց քաղաքում գտնվող մասնաճյուղի արևային ֆոտովոլտային կայանը (աղբյուր՝ Gebrüder Weiss / Art-Media):

Gebrüder Weiss ընկերության մասին

Gebrüder Weiss Հոլդինգ ԲԸ-ն, որի գլխամասը գտնվում է Ավստրիայի Լաուտերախ քաղաքում, լոգիստիկ ամբողջական ծառայություններ մատուցող համաշխարհային ընկերություն է, որն ունի շուրջ 8 000 աշխատակից և 180 սեփական մասնաճյուղեր: Անցած ֆինանսական տարում ընկերության տարեկան շրջանառությունը կազմել է 2,5 միլիարդ եվրո (2021 թվականին): Ընկերության ծառայությունների պորտֆոլիոն ներառում է տրանսպորտային և լոգիստիկ լուծումներ, թվային ծառայություններ և մատակարարման շղթայի կառավարում: Թվային և ֆիզիկական կարողությունների համատեղումը Gebrüder Weiss-ին հնարավորություն է տալիս արագ և ճկուն կերպով արձագանքելու հաճախորդների կարիքներին: Ընկերության կողմից իրականացվող բնապահպանական, տնտեսական և սոցիալական բազմաթիվ միջոցառումների շնորհիվ բեռնափոխադրումների ոլորտում ավելի քան 500 տարվա պատմություն ունեցող ընտանեկան այս ձեռնարկությունն այսօր համարվում է նաև առաջանեկ կայուն և շարունակական զարգացող բիզնես-գործունեություն ծավալելու առումով: **www.gw-world.com**

Հետադարձ կապ

Gebrüder Weiss ընկերության հետադարձ կապի բաժին կորպորատիվ հաղորդակցությունների բաժին
press@gw-world.com
Բունդեսշտրասե 110, Լաուտերախ A-6923
Հեռ.՝ +43.5574.696.2169
Ֆ.՝ +43.5.9006.2173
www.gw-world.com/news